«ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՆՈՒՅԹ» ԵՎ «ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ» ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԲԱԴՐԱՏ ԱՍԱՏՐՅԱՆ

Հասարակական աշխատանքի պրոցեսը բնութագրող հասկացությունների համակարգը բարդ է ու բազմազան։ «Աշխատանքը նախ և առաջ մարդու ու բնության միջև կատարվող պրոցես է»[1], որոշակի պահանջմունքների բավարարման համար մարդկանց նպատակամղված գործունեություն, միաժամանակ այն մի պրոցես է, որը պայմանավորված է այդ ընթացքում ծագող հարաբերություններով։ Աշխատանքն անհնարին է առանց որոշակի հասարակական հարաբերությունների, և այն «մարդկային կյանքի առաջին, հիմնական պայմանն»[2] է։ Հետևապես, աշխատանքը մի կողմից մարդու և բնության միջև կատարվող պրոցես է, իսկ մյուս կողմից՝ որոշակի բարիքների սպառման ընթացքում մարդկանց միջև ծագող հարաբերությունների համակարգ։ Դրան համապատասխան տնտեսագիտական գրականության մեջ օգտագործվում են «աշխատանքի բնույթ» և «աշխատանքի բովանդակություն» հասկացությունները։

Աշխատանքը որպես մարդու և բնության միջև ընթացող պրոցես հիմնականում բնութագրվում է «աշխատանքի բովանդակություն», իսկ որպես մարդկանց միջև ծագող հարաբերությունների համակարգ՝ «աշխատանքի բնույթ» հասկացողություններով։ Ընդսմին, նշված հասկացությունները, գտնվելով փոխադարձ կապի և փոխպայմանավորվածության մեջ, որպես աշխատանքի պրոցեսի երկու կողմեր՝ միանշանակ և նույնական չեն։ Դրանցից յուրաքանչյուրը պայմանավորված է հարաբերությունների և երևույթների մի ամբողջ համակարգով։ Այդ հասկացությունների սահմանազատումը և ուսումնասիրությունը ինչպես տնտեսագետների, այնպես էլ փիլիսոփաների ու սոցիոլոգների համար ունի մեթոդաբանական կարևոր նշանակություն։

Մարքսիզմ-լենինիզմի դասականներն աշխատանքի պրոցեսը հետազոտելիս նշված երկու հասկացությունները չեն սահմանազատել որպես առանձին ուսումնասիրության առարկա։ Ճիշտ է, նրանց աշխատություններում այդ հասկացություններն օգտագործվել են բազմիցս, սակայն դրանց օգտագործումը կրել է ոչ միանշանակ բնույթ։ Անհրաժեշտ է նաև նշել, որ Կ. Մարքսը չնայած ուղղակի ցույց էր տալիս աշխատանքային գործունեության նման երկատումը («Եթե վերանանք արտադրողական գործունեության որոշակի բնույթից և, հետևապես, աշխատանքի օգտակար բնույթից, ապա նրա մեջ կմնա մի բան, այն, որ աշխատանքը մարդկային աշխատուժի ծախսումն է»)[3], սակայն դրանք չէր առանձնացնում որպես տարբեր հասկացություններ։

Նշված հասկացությունների էության բացահայտումը դարձել է սովետական տնտեսագետների ուսումնասիրության առարկա՝ սկսած 1950-ական թվականների վերջերից։ Սակայն այդ հարցերի ընդհանուր ուսումնասիրության և բաժանման կապակցությամբ տարբեր հեղինակների միջև առկա են էական տարաձայնություններ։ Ընդհանուր առմամբ նրանց կարծիքները կարելի է բաժանել

---

1 Կ. Մարքս, Կապիտալ, հ. 1, Երևան, 1954, էջ 188։

2 Ֆ. Էնգելս, Բնության դիալեկտիկա, Երևան, 1969, էջ 167։

3 Կ. Մարքս, Կապիտալ, հ. 1, էջ 50։

Երեք խմբի։ Առաջին խմբի ներկայացուցիչները «աշխատանքի բնույթ» և «աշխատանքի բովանդակություն» հասկացությունները նույնացնում են[4]։ Ինչպես տեսնարկվեց, գտնվելով փոխադարձ կապի ու պայմանավորվածության մեջ, այդ հասկացություններն արտահայտում են միևնույն երևույթի տարբեր կողմերը։ Հենց թեկուզ այս առումով նշված հեղինակների դիրքորոշումը չի կարելի ճիշտ համարել։ Հեղինակների երկրորդ խումբը թեև «աշխատանքի բնույթ» և «աշխատանքի բովանդակություն» հասկացությունները չի նույնացնում, սակայն աշխատանքի բնույթը դիտարկում է «լայն և նեղ իմաստներով»՝ ըստ էության նեղ իմաստով աշխատանքի բնույթը միացնելով աշխատանքի բովանդակության հետ[5]։ Հեղինակների երրորդ խումբը հստակ առանձնացնում և տարբերակում է «աշխատանքի բնույթ» և «աշխատանքի բովանդակություն» հասկացությունները[6]։ Նշելի է, որ եթե առաջին խմբի կողմնակիցների դիրքորոշումը ժամանակին քննադատվել է վերջին երկու խմբերի հեղինակների կողմից, ապա վերջիններիս տեսակետների միջև որոշակի իմաստով ընդհանրություն է հաստատվել։ Դա արտահայտվում է նրանում, որ իրենց դիրքորոշումը հիմնավորելիս նրանք անտեսում են «աշխատանքի բնույթ» և «աշխատանքի բովանդակություն» հասկացությունները չնույնացնող մյուս հեղինակների դիրքորոշումը։

Գնահատելով երկրորդ խմբի հեղինակների դիրքորոշումը, անհրաժեշտ է նշել, որ նրանք, փորձելով ցույց տալ «աշխատանքի բնույթ» և «աշխատանքի բովանդակություն» հասկացությունների միջև գոյություն ունեցող կապը, առանձնացնում են աշխատանքի բնույթը նեղ իմաստով, նրա մեջ միավորելով «աշխատանքի բնույթ» և «աշխատանքի բովանդակություն» հասկացությունների տարրերը։ Այսպես, օրինակ, ըստ Վ. Կրևնևիչի «նեղ իմաստով աշխատանքի բնույթ» հասկացությունը կիրառվում է աշխատողների աշխատանքի ֆունկցիոնալ բովանդակության մեջ եղած սկզբունքային որակական փոփոխությունները ցույց տալու համար[7], որը, ի տարբերություն «աշխատանքի բովանդակության», սահմանվում է որպես աշխատանքի ֆունկցիոնալ բովանդակության մեջ սկզբունքային որակական փոփոխություններ։ Սկզբունքային փոփոխությունների թվին նա դասում է ֆիզիկական և մտավոր աշխատանքի հարաբերակցության փոփոխությունը, որն իր հերթին պայմանավորված է հասարակության նյութատեխնիկական բազայում տեղի ունեցող որոշակի փոփոխու-

---

4 Այս խմբի ներկայացուցիչների դիրքորոշումը գնահատելիս պետք է նշել, որ նրանց կարծիքը գերակշռում էր հիմնականում 1960-ական թվականների սկզբներին, երբ փաստորեն տվյալ պրոբլեմներին նվիրված առաջին աշխատություններն էին լույս ընծայվում։ Ընդ որում, նույնացումն ուներ այնպիսի բնույթ, երբ հետազոտվում էր նշված հասկացություններից միայն մեկը, որի մեջ ընդգրկվում էին նաև մյուսի տարրերը։ Այսպես, օրինակ, մի շարք հեղինակներ առանձնացնում են միայն «աշխատանքի բնույթ» հասկացությունը (А. П. Ляпин, Общественный труд и коммунизм, М., 1962, с. 28; З. И. Файнбург, Г. П. Козлова, Технический прогресс и изменения в характере труда при переходе от социализма к коммунизму, М., 1963, с. 3; Д. П. Кандалов, Закон перемены труда и всестороннее развитие человека, М., 1968, с. 28), իսկ մյուսները՝ միայն «աշխատանքի բովանդակություն» հասկացությունը (А. М. Солуянов, Влияние технического прогресса на изменение содержания труда рабочих, с. 117—139. «Технический прогресс и вопросы труда при переходе к коммунизму», М., 1962):

5 В. В. Кревневич, Влияние научно-технического прогресса на изменение структуры рабочего класса СССР, М., 1971, с. 21; Ее же, Рабочий класс в условиях НТР, М., 1979, с. 63; «Человек и его работа», М., 1967, с. 28 и др.

6 В. Г. Подмарков, Введение в промышленную социологию, М., 1973, с. 74—76; В. А. Фомин, Человек, труд, машина, Минск, 1976, с. 12; «Развитие общественного труда в условиях зрелого социализма», М., 1980, с. 6—9 и др.

7 В. В. Кревневич, Рабочий класс в условиях НТР, с. 63.

թյուններով[8]։ Կամ, օրինակ, Ա. Զդրավոմիսլովը «լայն իմաստով» աշխատանքի բնույթը կապելով որոշակի հասարակական հարաբերությունների հետ, «նեղ իմաստով» այն որոշում է աշխատանքի ֆունկցիոնալ բովանդակությամբ և աշխատանքային գործունեության պայմաններով, որոնք «հասարակության նյութատեխնիկական բազայի վիճակն արտացոլում են ավելի լայն պլանով, քան աշխատանքի բովանդակությունը»[9]։

Իհարկե, «աշխատանքի բնույթ» և «աշխատանքի բովանդակություն» հասկացություններում ֆիզիկական և մտավոր աշխատանքի հարաբերակցության փոփոխության առանձնացումն ունի որոշակի մեթոդաբանական նշանակություն, քանի որ այն անմիջականորեն կապված է կոնկրետ աշխատանքային պրոցեսի թե՛ արդյունքի և թե նպատակի հետ։ Բացի այդ, հետազոտողների մեծ մասն «աշխատանքի բնույթը» կապում է հասարակական հարաբերությունների, աշխատանքի հասարակական ձևի հետ։ Սակայն ճիշտ չէ ֆիզիկական և մտավոր աշխատանքների հարաբերակցության փոփոխությունները առանձնացնել որպես առանձին օղակ, որը բնութագրում է նեղ իմաստով «աշխատանքի բնույթ» հասկացությունը, քանի որ ֆիզիկական և մտավոր աշխատանքի միջև եղած հարաբերակցության փոփոխության հիմքն են աշխատանքային պրոցեսի տեխնիկայում ու տեխնոլոգիայում, հետևաբար նաև աշխատողի ֆունկցիաներում տեղի ունեցող տեղաշարժերը, որոնք իրենց հերթին աշխատանքի բովանդակության փոփոխության հիմքն են։ Հետևաբար, նման առանձնացումը սկզբունքորեն չի կարելի ճիշտ համարել։

Ավելի հիմնավոր դիրքորոշում ունեն երրորդ խմբի հետազոտողները, որոնք առանձնացնում են միայն «աշխատանքի բնույթ» և «աշխատանքի բովանդակություն» հասկացությունները, քանի որ, ինչպես արդեն նշվեց, դա ավելի է համապատասխանում Կ. Մարքսի այն հարցադրմանը, թե «Արտադրության ժամանակ մարդիկ հարաբերությունների մեջ են մտնում ոչ միայն բնության հետ։ Նրանք արտադրել չեն կարող, եթե միատեղ գործելու և իրենց գործունեությունը փոխադարձաբար փոխանակելու համար որոշ եղանակով չմիանան։ Արտադրելու համար մարդիկ մտնում են որոշ կապերի ու հարաբերությունների մեջ և միայն այդ հասարակական կապերի ու հարաբերությունների շրջանակներում գոյություն ունի նրանց ներգործությունը բնության վրա, տեղի է ունենում արտադրությունը»[10]։ Պետք է նշել, որ «աշխատանքի բովանդակություն» հասկացությունը սահմանելու հարցում ձևավորվել է հայացքների որոշակի միասնություն, որն արտահայտվում է նրանում, որ տվյալ հասկացությունը հետազոտող հեղինակների մեծամասնությունն այն հանդեցնում է աշխատանքի պրոցեսում աշխատողի կատարած ֆունկցիաներին։ Սակայն այդ հասկացության ընդհանուր սահմանումը բացահայտելիս նրանք գալիս են էապես տարբեր եզրակացությունների, որոնք կարելի է բաժանել ևս երեք խմբի։

Որոշ հեղինակներ ձգտում են աշխատանքի բովանդակության մեջ առանձնացնել լոկ այն հիմնականը, որով այդ հասկացությունը բնութագրվում է։ Օրինակ, կարելի է հանդիպել «աշխատանքի բովանդակություն» հասկացության այնպիսի բնորոշման, ինչպես աշխատանքի հագեցվածությունը ստեղծագործական տարրերով։ Կամ, օրինակ, Ա. Զդրավոմիսլովը նշում է, որ «աշխատանքի բովանդակության մեջ եղած տարբերություններն արտահայտվում են որպես մասնագիտությունների միջև եղած տարբերություններ»[11]։ Այդպիսի մասնավոր սահմանումները թերի են և արտացոլում են տվյալ հասկացության միայն մեկ կողմը։ Այդ դիրքորոշման թերությունը նախ այն է, որ ունի ընդհանուր բնույթ։ Բանն այն է, որ աշխատանքի բովանդակության մեջ եղած տարբերությունները

---

8 В. В. Кревневич, Влияние технического прогресса на изменение структуры рабочего класса СССР, с. 21.

9 «Человек и его работа», с. 28.

10 К. Маркс, Ф. Энгельс, Соч., т. 6, с. 441.

11 «Человек и его работа», с. 29.

դրսևորվում են ոչ միայն որպես մասնագիտությունների միջև եղած տարբերություններ, այլև իրրև տարբեր մասնագետների, դեռ ավելին, տարբեր որակավորման ու տարակարգի, տարբեր աշխատատեղերում և պայմաններում աշխատող բանվորների միջև եղած տարբերություններ։ Մյուս կողմից, այդ սահմանումը որոշ առումով կրում է մասնավոր բնույթ, քանի որ տարբեր մասնագիտությունների տեր մարդկանց աշխատանքի բովանդակությունը կարող է և չտարբերվել։ Բացի այդ, «ինչպես դեղձակությունը, այնպես էլ ջուլհակությունը չնայած արտադրողական գործունեության այդ տեսակների որակական տարբերությանը, մարդկային ուղեղի, մկանների, նյարդերի, ձեռքերի ու այլ մասերի արտադրողական ծախսումն են, և այս իմաստով՝ ներկայացնում են միևնույն մարդկային աշխատանքը»[12]։ Այսինքն հնարավոր է, որ տարբեր մասնագիտությունների աշխատողների գործունեությունն ըստ կատարվող ֆունկցիաների համընկնի։ Սվ, երրորդ, աշխատանքային պրոցեսում աշխատողի ֆունկցիաներն ավելի են արտահայտում, քան մասնագիտականն է, քանի որ դրանք որոշվում են նաև աշխատանքի պայմաններով և այլն։

«Աշխատանքի բովանդակություն» հասկացությունը սահմանող հեղինակների մյուս խումբը, ձգտելով ցույց տալ «աշխատանքի բովանդակություն» և «աշխատանքի բնույթ» հասկացությունների կապը, «աշխատանքի բովանդակություն» հասկացության մեջ մտցնում է սոցիալական մոմենտներ։ Օրինակ, Գ. Գոլևը նշում է, որ «աշխատանքի բովանդակությունը երկակի է։ Մի կողմից այն ներառում է բնության վերափոխման նպատակով իրականացվող մարդու նպատակահարմար գործունեությունը։ Դա աշխատանքի բովանդակության տեխնիկական կողմն է...։ Աշխատանքի բովանդակության մյուս կողմն աշխատանքի պրոցեսում մարդկանց միջև ծագող հարաբերություններն են»[13]։ Ըստ-տելով ցույց տալ «աշխատանքի բովանդակություն» հասկացության անքակտելի կապն «աշխատանքի բնույթ» հասկացության հետ և հիմնավորել այն գրությունը, թե արտադրության կապիտալիստական և սոցիալիստական եղանակների պայմաններում աշխատանքի բովանդակության մեջ գոյություն ունեն էական որակական տարբերություններ, Գ. Գոլևը փաստորեն այդ հասկացությունները նույնացնում է, «աշխատանքի բնույթը» սահմանելով «որպես աշխատանքի բովանդակության սոցիալական կողմ»[14]։ Կամ էլ, օրինակ, Ի. Ռոդովը գրում է. «աշխատանքի բովանդակությունը ներառում է տեխնոլոգիական գործողությունների և աշխատանքային ֆունկցիաների ողջ համակարգը և աշխատանքի հասարակական հատկությունների ու առանձնահատկությունների ամբողջությունը, որը որոշվում է արտադրության նյութա-տեխնիկական բազայի վիճակով և հասարակության սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակով»[15]։ Այստեղ անհրաժեշտ է նշել նաև Ի. Զանգլիի դիրքորոշումը, ըստ որի «աշխատանքի բովանդակությունը մարդու նպատակահարմար գործունեությունը կազմող տարրերի, կողմերի, կապերի, հարաբերությունների ամբողջությունն է... աշխատանքի բովանդակությունը կազմված է երկու բաղկացուցիչ մասերից՝ աշխատանքի տեխնիկական-կազմակերպչական և սոցիալ-տնտեսական բովանդակություններից... իսկ տվյալ սոցիալական խմբի բոլոր անդամների համար ընդհանուր աշխատանքի սոցիալ-տնտեսական բովանդակությունն աշխատանքի բնույթն է»[16]։ Անհրաժեշտ է նաև առանձնացնել Գ. Ֆրոլովի դիրքորոշումը։ Նա ճիշտ է, չնայած նշում է, որ հարում է Ի. Զանգլիի տեսակետին, սակայն, ի տարբերություն նրա՝ «աշխատանքի բնույթ» և «աշխատանքի բո-

---

12 Կ. Մարքս, Կապիտալ, հ. 1, էջ 50—51։

13 Г. Я. Голев, Изменение характера труда в процессе коммунистического строительства, Грозный, 1971, с. 5—6.

14 Նույն տեղում, էջ 6։

15 И. М. Рогов, Научно-технический прогресс и развитие личности, Л., 1974, с. 21.

16 И. И. Чангли, Труд, М., 1973, с. 97—99.

վանդակություն» հասկացությունները սահմանազատելուց հետո է միայն վերջինը տարբերակվում աշխատանքի բովանդակության տեխնիկական-կազմակերպչական և սոցիալ-տնտեսական կողմերի։ Նույն հեղինակն «աշխատանքի բնույթ» և «աշխատանքի սոցիալ-տնտեսական բովանդակություն» հասկացությունները տարբերակում է համատեղ աշխատանքային պրոցեսում արտադրողների միջև անմիջականորեն ծագող հարաբերություններն ու աշխատանքի հասարակական բնույթի և սոցիալ-տնտեսական էության զարգացման աստիճանն արտահայտող որակական հատկանիշներն առանձնացնելու միջոցով[17]։ Արդյոք այնքան փոխկապակցված չե՞ն դրանք, որ արտահայտեն այդ աստիճան տարբեր հասկացություններ, և արտադրողների միջև համատեղ գործունեության ընթացքում տեղ գտած հարաբերություններն ինչպե՞ս են տարբերվում հասարակության մասշտաբով արտադրողների միջև եղած հարաբերություններից։ Այդ իսկ պատճառով ճիշտ չէ տարբերել աշխատանքի բնույթը և աշխատանքի սոցիալ-տնտեսական բովանդակությունը, ասենք, «էական տարբերություններ» սկզբունքով։

Մենք միանում ենք նշված հասկացությունն ուսումնասիրող երրորդ խմբի հեղինակներին, որոնք «աշխատանքի բովանդակություն» հասկացությունը կապում են աշխատողի կողմից աշխատանքի պրոցեսում կատարած ֆունկցիաների հետ։ Հետաքրքրող հարցի վերաբերյալ տարբեր դիրքորոշում ունեցող վերը նշված երկու խմբերի կողմնակիցների կարծիքների թերությունները հետևյալն են։ Առաջին խմբի հեղինակներին բնորոշ է հասկացության չափից ավելի կոնկրետացումը, քանի որ նրանք փորձում են «աշխատանքի բովանդակությունը» սահմանել մեկ գործոնով, իսկ երկրորդին՝ չափից ավելի ընդլայնված մեկնաբանումը, որը հանգեցնում է այդ հասկացության մեջ սոցիալական մոմենտներ մտցնելուն և այն «աշխատանքի բնույթ» հասկացության հետ շփոթելուն։

Հարկ է նշել, որ «աշխատանքի բովանդակությունը» բարդ հասկացություն է և որոշվում է օբյեկտիվ ու սուբյեկտիվ բնույթի մի շարք գործոններով։ «Աշխատանքի բովանդակություն» հասկացությունը սահմանելիս, հիմք ընդունելով աշխատողի կողմից աշխատանքի պրոցեսում կատարած ֆունկցիաները, պետք է նաև ավելացնել, որ այդ ֆունկցիաները միայն կազմում են աշխատանքի բովանդակությունը։ Ուստի, բավարարվելով նման պատասխանով, պրոբլեմը չի կարելի լուծված համարել։ Օրինակ, Վ. Պոդմարկովը, հարելով նույն կարծիքին, նշում է, որ «աշխատանքի բովանդակությունն աշխատանքի պրոցեսում կատարած ֆունկցիաների բովանդակությունն է»[18]։ Տվյալ պրոբլեմը լուծելիս անհրաժեշտ է նկատի ունենալ, որ կոնկրետ աշխատանքի պրոցեսում աշխատողի ֆունկցիաները, դրանց կազմն ու բովանդակությունն ամբողջովին որոշված և պայմանավորված են աշխատանքի պրոցեսի նյութական տարրերի զարգացման և հասարակության մեջ աշխատանքի բաժանման մակարդակներով։ Մյուս կողմից անհրաժեշտ է նշել, որ այդ ֆունկցիաները դրսևորվում են միայն աշխատողի առկայության դեպքում և, հետևաբար, դրանց բովանդակությունը կախված է աշխատողի պատրաստվածության մակարդակից և կոնկրետ աշխատանքային պրոցեսում այդ ֆունկցիաները կատարելու հնարավորությունից։

Այսպիսով, մի կողմից՝ ֆունկցիաների շրջանակը, դրանց կազմն ու բովանդակությունը (կոնկրետ գործառնությունների առումով) թելադրվում են արտադրության պրոցեսի նյութական գործոններով, արտադրողական ուժերի իրային տարրերով, իսկ մյուս կողմից՝ կոնկրետ աշխատողով՝ նրա պատրաստվածության աստիճանով և տվյալ աշխատատեղում որոշակի որակի ու բարդության աշխատանք կատարելու հնարավորություններով։ Իհարկե, աշխատատեղը որպես աշխատանքի կոնկրետ գործիքների և առարկաների համախմբություն

---

17 «Социально-экономические проблемы труда: организация, планирование, управление», М., 1977, с. 21.

18 В. Г. Подмарков, նշվ. աշխ., էջ. 74։

միանգամայն որոշակի պահանջներ է ներկայացնում աշխատողին (պրոֆեսիոնալ և որակավորման բնութագրեր), որոնք, սակայն, ձևավորվում են «ա-ից ֆ» սկզբունքով։ Ուստի աշխատողն իր յուրահատուկ (անձնագրային), անհատական և մասնագիտական բնութագրերով, պարզություն մտցնելով նշված սկզբունքի մեջ, դրանով իսկ ներգործում է նաև կատարվող ֆունկցիաների բովանդակության և դրանց կատարման որակի վրա։ Եվ եթե գործոնների առաջին խումբն ունի օբյեկտիվ բնույթ այն առումով, որ տվյալ աշխատատեղում տրվյալ աշխատանքային պրոցեսի համար այն նախօրոք տրված է և պայմանավորված, ասենք, տեխնիկայի և տեխնոլոգիայի զարգացման մակարդակով, աշխատանքի պայմաններով և այլն, ապա գործոնների երկրորդ խումբն ունի սուբյեկտիվ բնույթ, քանի որ դրսևորվում է միայն աշխատանքային պրոցեսի ընթացքում և, բացի այդ, որոշվում է ինչպես աշխատողի նախնական բնութագրերով (սեռ, տարիք, կրթություն, աշխատանքային ստաժ և այլն), այնպես էլ տվյալ աշխատանքային պրոցեսում նրա կոնկրետ վարքով (առողջական, ֆիզիկական և հոգեկան վիճակ, հոգնածություն, կենտրոնացրվածություն և այլն)։ Արդեն ասվածից բացի, դրանով նույնպես ընդգծվում է այն հեղինակների տեսակետի անհիմն լինելը, որոնք «աշխատանքի բովանդակություն» հասկացության մեջ մտցնում են սոցիալական մոմենտներ, այն հանգեցնելով «աշխատանքի բնույթին»։ Իհարկե, այդ երկու հասկացություններն էլ գտնվում են փոխկապվածության և փոխպայմանավորվածության մեջ, իսկ նման բաժանումը միայն տրամաբանական կառույց է։ Սակայն այդ հասկացությունները միաժամանակ միմյանցից տարբերվող ինքնուրույն հասկացություններ են, աշխատանքային պրոցեսի մոմենտների, տարբեր կողմերի կամ կողմերից մեկի գնահատման ձևեր։ Աշխատանքի բովանդակությունը բնութագրում է կոնկրետ աշխատանքային պրոցեսի քանակական ու որակական որոշակիությունը և արտադրության պրոցեսի կողմերից մեկի՝ «մարդ-արտադրության միջոցներ», համակարգը։ Իսկ աշխատանքի պրոցեսը՝ նրա պարզ ու աբստրակտ մոմենտներով, որպես նպատակասլաց գործունեություն, հավասարապես ընդհանուր է նրա հասարակական բոլոր ձևերի համար[19]։ Սակայն աշխատանքի պրոցեսը միշտ տեղի է ունենում կոնկրետ-հասարակական ձևի մեջ, պայմանավորված է հասարակական հարաբերություններով, որոնք և արտահայտում են «աշխատանքի բնույթ» հասկացությունը։ Հենց դրանում է դրսևորվում «աշխատանքի բնույթ» և «աշխատանքի բովանդակություն» հասկացությունների փոխկապվածությունը։ Բացի այդ, դրանք պայմանավորված են այնպես, ինչպես արտադրողական ուժերն ու արտադրական հարաբերությունները։ Աշխատանքի բովանդակությունը նույնպես որոշվում է արտադրողական ուժերի զարգացման մակարդակով և նրա արտահայտությունն է կոնկրետ աշխատանքային պրոցեսում, ինչպես աշխատանքի բնույթը՝ հասարակության մեջ տիրապետող արտադրական հարաբերություններով և կոնկրետ աշխատանքային պրոցեսում սոցիալ-տնտեսական պայմաններով։ Սակայն նման փոխադարձ կապվածության և պայմանավորվածության շրջանակներում «աշխատանքի բնույթն» ունի որոշ ինքնուրույնություն. դա արտահայտվում է նրանում, որ աշխատանքի բովանդակության փոփոխությունները, որոնք տեղի են ունենում աշխատանքի պարզ մոմենտների որակական փոփոխությունների հետ մեկտեղ, բավականին հաճախակի են և միշտ չէ, որ ազդում են աշխատանքի բնույթի վրա։ Հասարակական ֆորմացիաների հեղափոխումը, աշխատանքի հասարակական ձևի և դրա բնույթի փոփոխումը միշտ նոր լիցք են տալիս և լայն հնարավորություններ բացում արտադրողական ուժերի զարգացման և, հետևաբար, աշխատանքի բնույթի փոփոխման համար։ Այսպիսով, աշխատանքի բնույթն արտահայտում է հասարակական ֆորմացիայով որոշվող տվյալ սոցիալ-տնտեսական պայմաններում «մարդ-արտադրության միջոցներ» համակարգի գործելու ձևը։ Աշխատանքի բնույթի փոփոխման հիմքը հասարակական ֆորմացիայի հեղափոխումն է։ Սոցիալիստական ֆորմացիայի հաստատումը և մասնավոր սեփա-

19 Կ. Մարքս, Կապիտալ, հ. 1, էջ 195։

կանության վերացումը հանգեցրին աշխատանքի բնույթի ստրատական փոփոխմանը։ Մինչսոցիալիստական ֆորմացիաների հերթափոխման ժամանակ, դա չէր կարող տեղի ունենալ, քանի որ հասարակական ֆորմացիաների հերթափոխումը չէր ուղեկցվում սեփականության բնույթի փոփոխմամբ, իսկ հասարակական աշխատանքի բնորոշ գծերն էին կազմում նրա մասնավոր, հակամարտ և վարձու հարկադրական բնույթը (բացի նախնադարյան համայնական կարգերից)։ Սոցիալիստական ֆորմացիայի լինելիության և արտադրության միջոցների նկատմամբ հասարակական սեփականության հաստատման պայմաններում աշխատանքի բնույթն արտահայտվում է նրանում, որ աշխատանքը ընդունում է. 1. անմիջական հասարակական բնույթ, երբ յուրաքանչյուրն աշխատում է հասարակության բարօրության համար, որը և նրա անհատական պահանջմունքների բավարարման միջոց է, 2. շահագործումից զերծ բնույթ, 3. համընդհանուր բնույթ, 4. պարտադիր բնույթ, որը չնայած ընդգրկում է հարկադրանքի տարրեր, բայց իր և հասարակության բարօրության համար ասոցացված աշխատողների ազատ աշխատանքն է, 5. ազատ բնույթ, երբ ամեն աշխատող ձեռք բերած մասնագիտությունից և ստացած կրթությունից կախված՝ իր աշխատանքը կարող է կիրառել հասարակական աշխատանքի ցանկացած ոլորտում, 6. անմիջական հասարակականորեն անհրաժեշտ բնույթ, քանի որ պլանային տնտեսության պայմաններում յուրաքանչյուր տվյալ պահին արտադրվում է (պետք է արտադրվի) միայն այնպիսի քանակությամբ ապրանք, ինչքան անհրաժեշտ է հասարակությանը։ Ուստի յուրաքանչյուրի աշխատանքը, լինելով հասարակականորեն անհրաժեշտ աշխատանքի մասնիկ, կրում է անմիջականորեն հասարակականորեն անհրաժեշտ բնույթ։ Այսպիսով, «աշխատանքի բնույթը» մի հասկացություն է, որն արտահայտվում է հասարակական ֆորմացիայով որոշվող այն սոցիալ-տնտեսական պայմաններով, որոնց առկայության դեպքում տեղի է ունենում աշխատանքային պրոցեսը։

Սոցիալիստական հեղափոխության հաղթանակի հետ մեկտեղ էական փոփոխություններ է կրել նաև աշխատանքի բովանդակությունը, որը, ինչպես արդեն նշվել է, որոշվում է աշխատանքի պրոցեսում աշխատողի կատարած ֆունկցիաներով։ Այդ փոփոխությունների իմաստն այն է, որ սոցիալիստական հասարակական ֆորմացիան լայն հնարավորություններ է բացել ինչպես աշխատանքի պրոցեսի իրային տարրերի, այնպես էլ աշխատողի՝ իբրև որոշակի բարդության աշխատանք կատարելու հնարավորության (նրա որակավորման բարձրացման առումով), զարգացման համար, համաձայն Կ. Մարքսի հետևյալ դրույթի. «Որ չափով որ աշխատանքի պրոցեսը սոսկ մի պրոցես է մարդու և բնության միջև, նրա պարզ տարրերը միատեսակ են մնում զարգացման բոլոր հասարակական ձևերի համար։ Բայց այդ պրոցեսի յուրաքանչյուր որոշակի պատմական ձև առաջ է տանում նրա նյութական հիմքերը և հասարակական ձևերը»[20]։ Ընդ որում, բացի այդ, սոցիալիստական հասարակական ֆորմացիայի հաստատումը զգալիորեն ընդլայնում է «աշխատանքի բովանդակության» հասկացության սահմանները։ Մինչսոցիալիստական ֆորմացիաներում, մասնավորապես կապիտալիզմի ժամանակ, երբ հասարակական աշխատանքի մասնավոր բնույթը հասավ իր զարգացման բարձրագույն աստիճանին, հակամարտ հակասություն գոյություն ուներ ինչպես մտավոր և ֆիզիկական աշխատանքների, այնպես էլ աշխատանքի տարբեր տեսակների՝ արդյունաբերական և գյուղատնտեսական աշխատանքների, արտադրողական և ոչ արտադրական ոլորտների աշխատանքների և այլնի միջև։ Թե՛ մտավոր և թե ֆիզիկական աշխատանքն անմիջականորեն կապված էր հասարակական հարաբերությունների հետ, աշխատանքի պրոցեսում վերջիններիս կրողն էր և արտահայտությունը։ Դեռ ավելին, մտավոր աշխատանքը հակադրված էր ֆիզիկականին, տիրապետող դասակարգի արտոնությունն էր և ֆիզիկական աշխատանք կատարողներին շահագործելու երաշխիքն էր։ Ուստի, դրանք «աշխատանքի բնույթ» հասկացության արտահայտությունն էին։

---

20 Կ. Մարքս, Կապիտալ, հ. 3, 2-րդ մաս, Երևան, 1949, էջ 425։

Սոցիալիստական արտադրաեղանակի հաստատումն առաջին հերթին արմատախիլ արեց նշված հակասությունները։ Մինչ այդ գոյություն ունեցող հակամարտ հակասությունները սոցիալիզմի ժամանակ ստանում են էական տարբերության բնույթ։ Սոցիալիզմի օրոք մտավոր աշխատանքն արդեն չի հակադրված ֆիզիկականին, տիրապետող դասակարգերի արտոնությունը չէ, այն ֆիզիկական աշխատանքից տարբերվում է ստացվող վերջնական արդյունքի տեսքով, մասնագիտական պատկանելիությամբ և այլն։ Իսկ այն պայմաններում, երբ գործունեության կոնկրետ ձևի և մասնագիտության ընտրությունն ապահովված է, ամբողջ հասարակության մասշտաբով սահմանափակումները հիմնականում ունեն օբյեկտիվ բնույթ և կապված են անհատի ցանկությունների, հակումների և հնարավորությունների հետ։ Հետևաբար, գործունեության այդ տարբեր տեսակները չեն էլ կարող հակադրվել։ Հենց այդ պատճառով էլ սոցիալիստական արտադրաեղանակի հաստատման հետ դրանք արդեն որոշում են ոչ թե աշխատանքի բնույթը, այլ բովանդակությունը։

Վերը շարադրվածը հաշվի առնելով, կարելի է տալ «աշխատանքի բովանդակություն» հասկացության ավելի լրիվ և կոնկրետ սահմանումը։ «Աշխատանքի բովանդակություն» հասկացությունն են կազմում աշխատանքի պրոցեսում աշխատողի կատարած ֆունկցիաները և նրա աշխատանքի որակը։ Այսպիսով, «աշխատանքի բովանդակություն» հասկացությունը սահմանելիս առանձնացվում են երկու գործոններ. ա) տվյալ աշխատանքային պրոցեսում աշխատողի կատարած ֆունկցիաները, որոնք աշխատանքի բովանդակության օբյեկտիվ հիմքն են. բ) աշխատանքի որակը, որպես աշխատանքի բովանդակության սուբյեկտիվ մոմենտ։ Ինչպես արդեն նշվել է, եթե առաջին գործոնն արտահայտում է աշխատանքային պրոցեսի որոշակիությունն այն առումով, որ արտադրության միջոցներն արդեն կանխորոշում են տվյալ աշխատատեղում գործունեության ձևը, աշխատանքի պրոցեսում աշխատողի կատարելիք ֆունկցիաների կազմն ու բովանդակությունը, ապա երկրորդն անմիջականորեն կապված է այդ ֆունկցիաների կատարման որակի հետ։ Ընդ որում, կատարման որակը պետք է տարբերել աշխատողի պատրաստվածության աստիճանից։ Յուրաքանչյուր աշխատատեղ, որպես գործունեության օբյեկտ, արդեն ենթադրում է աշխատողի միանգամայն որոշակի պատրաստվածություն, որն իրացվում է արդեն աշխատանքային գործունեության՝ նախօրոք դրված նպատակներին հասնելու համար ֆունկցիաների կատարման պրոցեսում։ Հենց գործունեության պրոցեսում էլ դրսևորվում է երկրորդ գործոնի գործողությունը, աշխատանքի բովանդակության վրա նրա ազդեցությունը։

ПОНЯТИЯ «ХАРАКТЕР ТРУДА» И «СОДЕРЖАНИЕ ТРУДА»

БАГРАТ АСАТРЯН

Резюме

В последние годы у нас в стране развернулась широкая дискуссия по поводу понятий «характер труда» и «содержание труда». Между тем исследование и правильное определение указанных понятий имеют принципиальное методологическое значение, так как они являются основой исследования трудового процесса. Важное значение имеет, в частности, разграничение понятий «характер труда» и «содержание труда». Будучи взаимосвязаны и взаимозависимы, они, однако выражают разные стороны трудового процесса. Если содержание труда является конкретной характеристикой процесса труда, то характер его определяется теми социально-экономическими условиями, в которых происходит данный трудовой процесс. Их взаимообусловленность же проявляется в том, что основой изменения характера труда являются изменения в его содержании.